«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-378-1.10.2018-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով լրացվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները՝

Նույն անձի՝ մեկից ավելի վարորդական վկայական ունենալու դեպքում կստացվի, որ այսպիսի իրավախախտում կատարելու դեպքում, երբ անձի վարորդական վկայականը վերցվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 264-րդ հոդվածի կարգով, և եթե գործի քննության արդյունքում նշանակվում է տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ, ապա անձը մյուս գործող վարորդական վկայականով հնարավորություն կունենա անարգել վարել տրանսպորտային միջոցը:

Ինչ վերաբերում է այլ երկրում վարորդական վկայական ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ապա հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 128-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը վարչական իրավախախտում է, Հայաստանի Հանրապետության քաղաքացին Հայաստանի Հանրապետության տարածքում պարտավոր է տրանսպորտային միջոցը վարել Հայաստանի Հանրապետության վարորդական վկայականով:

Միաժամանակ հայտնում ենք, որ հաշվի առնելով Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 41-րդ հոդվածի 2-րդ մասի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, օտարերկրյա քաղաքացու՝ Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության տարածքում գործող են և դրանք փոխանակելու անհրաժեշտությունը բացակայում է: